27.01.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2021 թվականի
հունվարի 27-ի N 100 - Ն որոշման

«Հավելված N 5
ՀՀ կառավարության 2005 թվականի
օգոստոսի 18-ի N 2085-Ն որոշման

ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՏԵՍՈՒՉՆԵՐԻ ՀԱՄԱԶԳԵՍՏ ԿՐԵԼՈՒ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի տեսուչին համազգեստը տրամադրում է Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը՝ համաձայն սույն որոշմամբ սահմանված պայմանների:

2. Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի տեսուչի մեղքով՝ սահմանված ժամկետներից շուտ օգտագործման համար ոչ պիտանի դարձած համազգեստը փոխարին-վում է նորով՝ տեսուչի սեփական միջոցների հաշվին:

3. Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի տեսուչի աշխատանքից ազատվելու դեպքում տեսուչի կրած համազգեստը հանձնվում է Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնին:

4. Համազգեստ կրում են Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի բոլոր տեսուչները՝ սույն կարգի 7-րդ կետում նկարագրված դեպքերում:

5. Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի այլ աշխատողներին, իսկ աշխատանքային գրասենյակում՝ նաև տեսուչներին, թույլատրվում է համազգեստի փոխարեն կրել քաղաքացիական հագուստ:

6. Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի տեսուչի համազգեստը պետք է համապատասխանի սույն որոշման N 3 հավելվածի նկարագրությանը և պահվի անթերի վիճակում:

7. Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի տեսուչները համազգեստը կրում են ամենօրյա ծառայողական պարտականությունները կատարելու, ատեստավորման, հատուկ ուսուցման և վերապատրաստման ժամանակ, ինչպես նաև բնապահպանական վերահսկողության այլ գործառույթներն իրականացնելու ժամանակ:

8. Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի տեսուչին արգելվում է համազգեստի վրա կրել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չնախատեսված կրծքանշաններ, քաղաքացիական հագուստի պարագաներ և այլ իրեր:

9. Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի տղամարդ տեսուչները կրում են կանաչ, իսկ կին տեսուչները՝ սպիտակ գույնի շապիկ:

10. Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի տեսուչի համազգեստը, իր առանձին տարրերով հանդերձ, պետք է լինի մաքուր և արդուկված:

11. Արգելվում է կրել գունաթափված կամ չարդուկված շապիկ կամ տաբատ:

12. Արգելվում է համազգեստը կրել ոչ աշխատանքային ժամերին և սույն կարգի 7-րդ կետում չնախատեսված դեպքերում:

13. Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի տեսուչի համազգեստի կրման ժամկետներն են՝

NN ը/կ	Անվանումը	Թիվը (հատ)	Կրելու ժամկետը (տարի)
1.	Գլխարկ	**2**	**2**
2.	Տաբատ	**2**	**1**
3.	Շապիկ	**4**	**1**
4.	Բաճկոն	**2**	**2**
5.	Գոտի	**2**	**1**

»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ԹՈՐՈՍՅԱՆ